32004D0217

2004/217/ԵՀ

Որպես անասնակեր արգելված շրջանառություն կամ գործածություն ունեցող նյութերի ցանկը հաստատող՝ Հանձնաժողովի 2004 թվականի մարտի 1–ի որոշում

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(ծանուցված՝ թիվ C(2004) 583 փաստաթղթի համաձայն)

Պաշտոնական տեղեկագիր, L 067, 05.03.2004թ., էջ 0031 - 0033

(2004/217/ԵՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով 70/524/ԵՏՀ, 74/63/ԵՏՀ, 82/471/ԵՏՀ եւ 93/74/ԵՏՀ հրահանգները փոփոխող եւ 77/101/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ «Առաջնային կերային նյութերի շրջանառության եւ գործածության մասին» Խորհրդի 1996 թվականի ապրիլի 24–ի 96/25/ԵՀ հրահանգ[1] եւ, մասնավորապես, դրա 11(բ) հոդվածը,

Քանի որ

1) Հանձնաժողովի 91/516/ԵՏՀ որոշմամբ[2] սահմանվել է համակցված կերային նյութերում արգելված գործածություն ունեցող բաղադրամասերի ցանկը՝ «Համակցված կերերի շրջանառության մասին» Խորհրդի 1979 թվականի ապրիլի 2–ի 79/373/ԵՏՀ հրահանգին[3] համապատասխան: Այդ որոշմամբ սահմանված արգելքը չի կիրառվում նման բաղադրամասերի նկատմամբ, եթե դրանք

[1] ՊՏ L 125, 23.05.1996թ., էջ 35: Վերջին անգամ թիվ 806/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ (ՊՏ L 122, 16.05.2003թ., էջ 1):

[2] ՊՏ L 281, 09.10.1991թ., էջ 23: Վերջին անգամ 2000/285/ԵՀ որոշմամբ փոփոխված որոշում (ՊՏ L 94, 14.04.2000թ., էջ 43):

[3] ՊՏ L 86, 06.04.1979թ., էջ 30: Վերջին անգամ թիվ 807/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ (ՊՏ L 122, 16.05.2003թ., էջ 36):

շրջանառվում են որպես կերային նյութեր կամ անմիջականորեն օգտագործվում են որպես կերային նյութեր: Այդ բաղադրամասերի ցանկը փոփոխվել է մի քանի անգամ,

2) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2000/16/ԵՀ հրահանգով նախատեսված էր, որ որպես առաջնային կերանյութեր արգելված շրջանառություն կամ գործածություն ունեցող նյութերի ցանկը պետք է կազմվի 96/25/ԵՀ հրահանգի հիման վրա՝ փոխարինելու համար 91/516/ԵՏՀ որոշումը, որպեսզի արգելքների գործողության ոլորտը լինի ընդհանուր եւ կիրառվի թե՛ առաջնային կերանյութերի նկատմամբ որպես այդպիսիք, եւ թե՛ համակցված կերային նյութերում դրանց օգտագործման նկատմամբ,

3) ըստ այդմ, ապահովելու համար առաջնային կերանյութերի համապատասխանությունը 96/25/ԵՀ հրահանգի 3–րդ հոդվածով սահմանված անվտանգության պահանջների հետ, կազմվել է նման ցանկ, որի նպատակը 91/516/ԵՏՀ որոշմամբ սահմանված ցանկը փոխարինելն է,

4) որոշ սահմանափակումներ կամ արգելքներ արդեն սահմանված են Համայնքի օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Որոշակի փոխանցվող սպունգանման էնցեֆալոպաթիաները կանխելու, վերահսկելու եւ ոչնչացնելու կանոնները սահմանող»՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001 թվականի մայիսի 22–ի թիվ 999/2001 կանոնակարգով (ԵՀ)[4], ինչպես նաեւ «Մարդու կողմից սպառման համար չնախատեսված կենդանական ծագման օժանդակ արտադրանքի վերաբերյալ առողջապահական կանոնները սահմանող»՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի հոկտեմբերի 3–ի թիվ 1774/2002 կանոնակարգով (ԵՀ)[5]: Ըստ այդմ, այդ սահմանափակումները կամ արգելքները չպետք է կրկնվեն այն նյութերի ցանկում, որոնց շրջանառությունը կամ գործածությունը՝ որպես անասնակեր, արգելված է,

5) Համայնքի օրենսդրության հստակության նկատառումներից ելնելով՝ 91/516/ԵՏՀ որոշումը պետք է ուժը կորցրած ճանաչել եւ փոխարինել սույն Որոշմամբ,

---

[4] ՊՏ L 147, 31.05.2001թ., էջ 1: Վերջին անգամ Հանձնաժողովի թիվ 2245/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 333, 20.12.2003թ., էջ 28):

[5] 6) ՊՏ L 273, 10.10.2002թ., էջ 1: Հանձնաժողովի թիվ 808/2003 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 117, 13.05.2003թ., էջ 1):

6) սույն Որոշմամբ նախատեսված միջոցառումները համապատասխանում են Սննդի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՈՐՈՇՈՒՄԸ.

Հոդված 1

Սույն Որոշումն առանց վերապահումների կիրառվում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 999/2001 կանոնակարգի (ԵՀ) եւ թիվ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ) նկատմամբ:

Հոդված 2

Հավելվածում նշված նյութերի շրջանառությունը եւ գործածումը՝ որպես անասնակեր, արգելվում է:

Հոդված 3

91/516/ԵՏՀ որոշումն ուժը կորցրած է ճանաչվում:

Ուժը կորցրած ճանաչված որոշմանը կատարվող հղումները մեկնաբանվում են որպես սույն Որոշմանը կատարվող հղումներ:

Հոդված 4

Սույն Որոշումը կիրառվում է 2004 թվականի մարտի 25-ից:

Հոդված 5

Սույն Որոշումը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2004 թվականի մարտի 1-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Դեյվիդ Բիրն

Հանձնաժողովի անդամ

4) ՊՏ L 105, 03.05.2000թ., էջ 36:

ՀԱՎԵԼՎԱԾ

Որպես անասնակեր արգելված շրջանառություն կամ գործածություն ունեցող նյութերի ցանկ

Արգելվում է հետեւյալ նյութերի շրջանառությունը եւ գործածումը որպես անասնակեր՝

1. արտաթորանքը, մեզը, ինչպես նաեւ մարսողական համակարգից արտազատված պարունակությունը, որն առաջացել է մարսողական համակարգի դատարկումից կամ հեռացումից՝ անկախ մշակման կամ խառնուկի տեսակից:

2. Դաբաղանյութերով մշակված մորթին, այդ թվում՝ դրա մնացուկները:

3. Սերմերը եւ մյուս բազմացման նյութերը, որոնք, նպատակային օգտագործման (բազմացման) համար, բերքահավաքից հետո ենթարկվել են հատուկ մշակման՝ բույսերի պահպանման համար նախատեսված նյութերով, ինչպես նաեւ դրանցից ստացված՝ բոլոր մյուս նյութերը:

4. Փայտը, այդ թվում՝ փայտի թեփը եւ փայտից ստացված մյուս նյութերը, որոնք մշակվել են փայտանյութի համար նախատեսված կոնսերվանտներով, ինչպես սահմանված է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 98/8/ԵՀ հրահանգի V հավելվածով (1):

5. 91/271/ԵՏՀ հրահանգի 2–րդ հոդվածով (2) սահմանված՝ քաղաքային, տնային եւ արդյունաբերական կեղտաջրերի մշակման գործընթացի ցանկացած փուլում ստացված ցանկացած թափոն՝ անկախ այդ թափոնի որեւէ հետագա մշակումից եւ դրանց ծագումից (3):

6. Քաղաքային կոշտ թափոնները (4), ինչպիսիք կենցաղային թափոններն են:

7. Գյուղատնտեսական մթերքների օգտագործումից հետո մնացած փաթեթանյութերը եւ դրանց մասերը:

1) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի փետրվարի 16-ի 98/8/ԵՀ հրահանգ «Բիոցիդների շուկայահանման մասին» (ՊՏ L 123, 24.04.1998թ., էջ 1):"

2) Խորհրդի 1991 թվականի մայիսի 21–ի 91/271/ԵՏՀ հրահանգ «Քաղաքային կեղտաջրերի մշակման մասին» (ՊՏ L 135, 30.05.1991թ., էջ 40):

3) «Կեղտաջուր» եզրույթը չի վերաբերում արտադրական գործընթացում օգտագործվող ջրին, այն է՝ սննդի կամ անասնակերի արդյունաբերության մեջ կիրառվող անկախ խողովակներից հոսող ջրին. եթե այդ խողովակները ջրատար են, ապա այդ ջուրը կարող է օգտագործվել որպես անասնակեր միայն առողջարար եւ մաքուր լինելու դեպքում, ինչպես սահմանված է «Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին» Խորհրդի 1998 թվականի նոյեմբերի 3–ի 98/83/ԵՀ հրահանգի 4–րդ հոդվածով: Ձկնարդյունաբերության դեպքում, տվյալ խողովակները կարող են մատակարարել նաեւ ծովի մաքուր ջուր, ինչպես սահմանված է ձկնաբուծական արտադրանքի արտադրությանը եւ շուկայահանմանը ներկայացվող անվտանգության պայմանները սահմանող՝ Խորհրդի 1991 թվականի հուլիսի 22–ի 91/493/ԵՏՀ հրահանգի 2–րդ հոդվածով: Արտադրական գործընթացում օգտագործվող ջուրը կարող է օգտագործվել որպես անասնակեր միայն այն դեպքում, եթե այն պարունակում է առաջնային սննդանյութեր կամ առաջնային կերանյութեր եւ տեխնիկապես չի պարունակում մաքրող նյութեր, ախտահանիչներ կամ անասնակերի արտադրության ոլորտը կարգավորող օրենսդրությամբ չթույլատրվող այլ նյութեր:

4) «Քաղաքային կոշտ թափոն» եզրույթը չի վերաբերում սննդամթերքի արտադրական թափոններին, ինչպես սահմանված է թիվ 1774/2002 կանոնակարգով (ԵՀ):